

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի Երևանի և Դիլիջանի Դրամարկային կենտրոնների գործունեության համար տեխնիկական սարքավորումներ (թղթադրամի և մետաղադրամի իսկությունը ստուգող, տեսակավորող և հաշվող մեքենաներ, ջերմաեռակցող սարքեր) ձեռք բերելու մրցույթ:

### Մրցույթի պայմաններն են.

1. Թղթադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն թղթադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները (և դիմերեսի, և դարձերեսի համար).

1.1 Թղթադրամների տեսանելի պատկերի և չափերի համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,

1.2 Ուլտրամանուշակագույն լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

1.3 Ինֆրակարմիր լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

1.4 Մագնիսականություն:

2. Պիտանի, կենդծ և հնամաշ/վնասված թղթադրամների որակում, առանձնացում, տեսակավորում:

3. Հաշված և տեսակավորած թղթադրամների վերաբերյալ հաշվետվություններ ստանալու/տրամադրելու և արտահանելու հնարավորություն:

4. Մետաղադրամների հաշվման, տեսակավորման համար կիրառվող մեքենաները պետք է ապահովեն մետաղադրամների վճարունակության նվազագույն պահանջների հետևյալ ստուգումները.

4.1 Մետաղադրամների չափերի (տրամագիծ և հաստություն) համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին/անվանական արժեք և նկարագիր /,

4.2 Համաձուլվածքի ստուգում (մագնիսականություն, էլեկտրահաղորդականություն):

4.3 Սարքերի հետագա սպասարկման, ծրագրային կարգաբերման/Բանկի կողմից սպասարկվող արժույթների, այդ թվում ՀՀ դրամի ճանաչման, իսկության ստուգման/մասին տեղեկատվություն:

4.4 Պահանջվող տեխնիկական սարքավորումների մատակարարման վերջնաժամկետ սահմանել մինչև 15.03.2023թ.:

## **Պահանջվող փաստաթղթեր.**

- մրցույթի մասնակցության դիմում հայտ
- կոմերցիոն առաջարկ
- կազմակերպության մասին տեղեկատվություն (կանոնադրություն, պետ.ռեգիստրի գրանցման վկայական)
- գործընկեր կազմակերպությունների ցանկ

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են մրցութային դիմում-հայտերի թղթային տարբերակը՝ պահանջվող փաստաթղթերի հետ միասին, փակ ծրարներով ներկայացնել «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 48 հասցեով, մինչև 2023 թվականի հունվարի 27-ը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 09:15-ից 16:45-ը:

## **Փակ ծրարի վրա պետք է նշվի.**

- Մրցույթի անվանումը (թղթադրամի և մետաղադրամի իսկությունը ստուգող, տեսակավորող և հաշվող մեքենաների, ջերմատեղակցող սարքերի ձեռք բերման մրցույթ)
- «Չբացել մինչև մրցույթի անցկացման օրը գրառումը,
- «Մրցութային հանձնաժողովին գրառումը,
- Ուղարկող (Մրցույթի մասնակից) և ստացող (Մրցույթի կազմակերպիչ) կազմակերպությունների հասցեները, ամբողջական անվանումները:

Մրցույթի արդյունքների վերաբերյալ բոլոր մասնակիցները կտեղեկացվեն մինչև 2023 թվականի փետրվարի 6-ը:

Տեղեկությունների համար զանգահարել «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Դրամական գործառնությունների վարչություն՝ +374 10 59 20 96 կամ +374 93 22 33 99 հեռախոսահամարներով:

**Ձեռքբերման համար առաջարկվող տեխնիկական սարքավորումների մակնիշները և քանակը, որոնք համապատասխանում են պահանջվող պայմաններին:**

Հ/Հ	Տեսակը	Մակնիշ	Երևանի ԴԿ	
			միավորի գին քանակ (ՀՀ դրամ)	Դիլիջանի ԴԿ միավորի գին քանակ (ՀՀ դրամ)
1	Թղթադրամ տեսակավորող մեքենա	Dc-5,	2	1
2*	Թղթադրամ տեսակավորող մեքենա	BPS C 5	1	
3	Մետաղադրամ տեսակավորող մեքենա	Ribao cs-610+	1	1
4	Ջերմատեռակցող սարք	Tisff-305	1	1
5	Թղթադրամի խսկությունը ստուգող սարք	Do Cach combo mini	1	1
6	Թղթադրամ հաշվող ստուգող մեքենա	Dc- 45, BPS C 1		1

\* կամ Kisan K-6 NMPV-1000 – որը ունի նույն Dc 5 BPS C-5